



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 նոյեմբերի 2014 թվականի N Մ - 1084 - Ա
քաղ. երևան

«ՀՈՒՅՄԻ ԱԿՎԱԿԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՔԵՉ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի նոյեմբերի 10-ի համաձայնեցման թերթիկը, որ ո ռ ո շ ու մ է.

1. Բարեգործական դրակել «Հույսի ակավեն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 17,108.5 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Քեզ համար Հայաստան» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Convoy of Hope» բարեգործական կազմակերպության կողմից «Հույսի ակավեն» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռը՝ հագուստ, կոշիկ և սնունդ (37,619.4 կգ ընդհանուր քաշով, 17,108.5 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը կազմել են 9,446 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Հույսի ակավեն» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱԿ


Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հույսի Ակավեն» ԲՀ կազմակերպության


Գործադիր տնօրեն՝ Վահրամ Խաչատրյանի կողմից

« 06 » նոյեմբերի 2014 թ.

«ՔԵՉ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ»

1	Ծրագրի նպատակը	Սոցիալապես անապաղ խավի կարիքների նվազեցում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, սույթերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից (այսուհետ հարկային արտոնություններ):
3	Բարեգործը	Ծրագիրը ֆինանսավորում է «Convoy of Hope» բարեգործական կազմակերպությունը. Հասցե՝ 330 S. Patterson Springfield, MO 65802 US
4	Ծրագիրը կատարողը	«Հույսի Ակավեն» բարեգործական հիմնադրամ, ՀՀ կոտայքի մարզ գ. Պռոշյան, Վանահովիտ 3
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ բոլոր մարզերը և ԼՂՀ՝ սոցիալապես անապահով ընտանիքներին
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ֆինանսական չափը կազմում է 17, 108.5 ԱՄՆ \$, որից ապրանքների արժեքը կազմում է՝ 7,662.5 ԱՄՆ \$, և փոխադրման ծախսերը՝ 9,446 ԱՄՆ \$:
7	Բարեգործություն ստացողը	ՀՀ բոլոր մարզերը և ԼՂՀ՝ սոցիալապես անապահով

		ընտանիքներ
8	Օրագրի իրականացման տևողությունը	06.11.2014 – 06. 11. 2015 թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Օրագրի շրջանակում նախատեսվում է սոցիալապես անապահով խավին բաժանել օգնություն՝ հիգիենայի պարագաներ, սնունդ, հագուստ, կոշիկ, որոնց ընդհանուր արժեքը կազմում է՝ 7,662.5 ԱՄՆ \$:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ներմուծվելու է՝ 1. Պարարտացված բրինձ սոյայով՝ 24,947.95 կգ.- 4,125\$, 2. Բրինձ պարարտացված ոսպով՝ 4,626.64 կգ.-750\$, 3. Չոր ապուր՝ 5,710.73 կգ. - 480\$, 4.Տագրիր՝ 1220.63կգ.-262.50\$, 5. Հագուստ՝ 410.39կգ.- 320\$, 6. Կոշիկներ՝ 703.06կգ. -1,725\$, որոնք անհատույց բաշխվելու են ՀՀ և ԼՂՀ-ի անապահով խավի ընտանիքներին.(կից ներկայացված է ցանկը)
11	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պատական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ շահառուների մասով:
13	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է « Convoy of Hope » կազմակերպության կողմից, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի ներկայացուցչի համակարգման հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:



Գործադիր տնօրեն՝

Վահրամ Խաչատրյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ռ Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ - 1085 - Ա
քաղ. երևան

«ՕՅՈՒՆՋՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ «ՕՅՈՒՆՋՅԱՆ» ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊԱՎՈՑ-
ՎԱՐԺԱՐԱՆ» ԴՈՒՎ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 29-ի N 07/80-2/18577-14 և հոկտեմբերի 29-ի N 06/3-3/18632-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 29-ի N 02/8275-14 և Շիրակի մարզպետարանի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի N 01/5173-14 եզրակացությունները, որոշում է:

1. Բարեգործական որակելի «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից (<< Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Մեծ Մկրտչյան 47, ՀՎՀՀ 05538995) իրականացվող՝ 5,114,071 դրամ արժողությամբ «Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան» ԴՈՒՎ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգում՝ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2014 թվականի հոկտեմբեր 15-ին կնքված՝ N ՕԲՀ- 131014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 5,114,071 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Օյունջյան» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:


4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԿԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Ս Կ Վ Ս Ը
կողմից
«22» հոկտեմբերի 2014թ



«Օյունջյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Գագիկ Լաճիկյանի
«Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օյունջյան» միջնակարգ դպրոց – վարժարան
ԴՈՒՎ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգման
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐ

1. Ծրագրի նպատակը	Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց – վարժարան ԴՈՒՎ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգում արժեքն պատրի հիմքի ջրամեկուսացում (Արվեստի դպրոցին կից)։ 2 դասարանների վերակառուցում 4 դասարանի վարժարանի և արվեստի դպրոցի միացում
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Այնպիսով ենթ ԱԱՀ-ից ազատում և, նրախոսում («Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդված)
3. Բարեգործը	Ամերիկացի բարերար Ջոն Օհանես Օյունջյան
4. Ծրագրի վարարողը	«Օյունջյան» բարեգործական հիմնադրամ, ք. Գյումրի, Մեծ Մկրտչյան 47, ՀՎՀՀ՝ 05538995
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը ՀՀ Շիրակի մարզի ք. Գյումրի, Մեծ Մկրտչյան 47, Բնագավառը կրթական-մշակութային
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5 114 071 (հինգ միլիոն հարյուր տասնչորս հազար յոթասուսուն) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7. Բարեգործություն ստացողը	Գյումրի քաղաքի Օյունջյանի անվան թիվ 21 միջնակարգ դպրոց
8. Ծրագրի իրականացման տևողությունը	15.10.2014 – 20.11.2014 թ.
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց – վարժարան ԴՈՒՎ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգում արժեքն պատրի հիմքի ջրամեկուսացում (Արվեստի դպրոցին կից)։ 2 դասարանների վերակառուցում 4 դասարանի վարժարանի և արվեստի դպրոցի միացում նշխատանքները գրվել է 5 114 071 ՀՀ դրամ Շահարադատության մարզի Շիրակի մարզի կազմում է 5 114 071 ՀՀ դրամ


Շինարարությունը նախատեսվործ է իրականացնել մեկ փուլով
Արժեք 4893848 դրամ
Շինարարի շահույթ 4.5 % 220223 դրամ.
Ընդհանուրը 5114071 դրամ:
Շինարարությունը նախատեսվում է ավարտել 20.11.2014 թ.

Ավելարկում ենք ԱԱՀ-ից ազատում 5114071 դրամի չափով պայմանագիր No
ՕՐՀ-131014 կնքված 13.10.2014թթ. «Կանակա» ԲԲԸ-ի. («Հ Լուր» ձառք. ք.
Վանաձոր, Նժդեհի 4, ՀՎՀՀ՝ 06901369) և «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի
(ՀՀ, ք. Գյումրի, Միեր Մկրտչյան 47, ՀՎՀՀ՝ 05538995) միջև:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծախսար- թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպանան ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման տեղական հիմնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Շիրակի մարզպետարան, Գյումրիի քաղաքապետարան և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից:



13/6



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ - 1086 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՍՑԵՈՎ ԱՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 07/80-2/19501-14 և նոյեմբերի 10-ի N 06/5-1/19702-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի Կանադայի Հայ ավետարանչական ընկերակցության կողմից Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարության հասցեով ուղարկված միանգամյա ինքնատաքացվող միջատակի (2 տեղ, 263 կգ ընդհանուր քաշով, 3,558 կանադական դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,114.52 կանադական դոլար, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսվում է տրամադրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ - 1087 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՑԱԽԻ ՄԻԱՎՈՐ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/19261-14 և նոյեմբերի 3-ի N 06/5-1/19129-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակելի իրանի Իսլամական Հանրապետության Սպահանի Հայոց Թեմի Թեմական խորհրդի կողմից «Հայ օգնության միության Արցախի միավոր» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված սպիտակեղենի, հագուստի և գրենական պիտույքների (25 տեղ, 360 կգ ընդհանուր քաշով, 800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 150 ԱՄՆ-ի դոլար, «Սյունիքի» ՏՄ) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսված է Արցախի սոցիալապես անապահով ընտանիքներին և ՀՕՄ «Սոսե» մանկապարտեզի երեխաների համար:

2. «Հայ օգնության միության Արցախի միավոր» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ - 1088 - Ա
քաղ. երևան

**«ՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՐՀ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 07/80-2/18833-14 և հոկտեմբերի 31-ի N06/5-1/18899-14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 31-ի N 1/06/1100-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից Արթուր Աբրահամ հիմնադրամի կողմից «Սպորտի աշխարհ» հիմնադրամի հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (87 տեղ, 1,600 կգ ընդհանուր քաշով, 52,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Սպորտի աշխարհ» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 նոյեմբերի 2014 թվականի N Մ - 1089 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՄԱՍԻՆ**


(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 07/80-2/188361-14 և նոյեմբերի 3-ի N 06/5-1/19094-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված տոհմային ցույցերի սերմնահեղուկը (մեկ տեղ, 11.5 կգ ընդհանուր քաշով, 3,500 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 740 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշման ուղղակի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ- 1090 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե» հասարակական
կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 10-ի N 07/80-2/18968-14 և նոյեմբերի 3-ի N 06/3-3/19122-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:


1. Սահմանել, որ «ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական ցուցադրության նախագծման և իրականացման» ծրագրի մասին» N Մ-1029-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շոու-Մաստեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01528343) 2014 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Կոմիտաս Վարդապետի թանգարանի ցուցադրության կազմակերպման աշխատանքների լուսավորության ու տեսաձայնային համակարգերի տեղադրման և գործարքման աշխատանքների իրականացում՝ 2,405,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1091-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 31-ի N 07/80-2/18841-14 ու հոկտեմբերի 31-ի N 06/5-1/18956-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 31-ի N ԱՄ/22.2/11458-14 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի Ռուսաստանի Դաշնությունից «ՍՊԻԴ ինֆոսվյազ» ռուսական տարածաշրջանային հասարակական կազմակերպության կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «ՍՊԻԴ ինֆոսվյազ» ռուսական տարածաշրջանային հասարակական կազմակերպության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև ստորագրված գույքի անհատույց՝ որպես դրամաշնորհի տրամադրման պայմանագրի շրջանակներում ստացված բեռի (մանրադիտակ՝ 6.4 կգ քաշով, 40,000 ռուսական ռուբլու համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,905 ռուսական ռուբլի, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1099 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԶԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 07/80-2/19400-14 ու նոյեմբերի 6-ի N 06/5-1/19377-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի նոյեմբերի 4-ի N ԱՄ/22.2/11604-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում հսկողություն իրականացնող դաշնային ծառայության (Роспотребнадзор) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Ռուսպոտրեբնադզոր»-ի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև կնքված վարակիչ հիվանդությունների ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագրի շրջանակներում ստացված բեռի (ՄԻԱՎ-ի հակաճին/հակամարմինների հայտնաբերման «ԱԴԱՏ-ՎԻԿ-1,2» և իմունաբլոտի «ՄՈՒԱ-ԵՆՈՒ-ՎԻԿ-1, ՎԻԿ-2» թեստ-հավաքածուներ՝ 9 տեղ, 129 կգ ընդհանուր քաշով, 401,072.5 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՁԵՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1093-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՅԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 28-ի N 07/80-2/18528 -14 և հոկտեմբերի 24-ի N 06/5-1/18143 -14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N ԱՄ/22.2/11107-14 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով Ռուսաստանի Դաշնության միջոցով՝ «Զվեզդա» կազմակերպության կողմից ուղարկված թեսթ-հավաքածուների (8 տեղ, 122,7 կգ ընդհանուր քաշով, 289,450 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:


2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բերի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱՐԱՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1094 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ
(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 07/80-2/18090-14 ու հոկտեմ-
բերի 24-ի N 06/5-1/18122-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նա-
խարարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N ԱՄ/22.2/11104-14 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված, Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության
հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով
ստացված դեղերը (8 տեղ, 40 կգ քաշով, 1217,42 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 12390 հնդկական ռուպի, «Չվարթնոց» ՄՏ)
ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրե-
րի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի
Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013
թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ- 1095 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ
(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
դրամաշնորհային ծրագիր) (1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսնե-
րի նախարարության 2014 թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/19257-14 ու նոյեմբերի 3-ի
N 06/5-1/19125-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
2014 թվականի նոյեմբերի 3-ի N ԱՄ/22.2/11545-14 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույրզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հան-
րապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստաց-
ված դեղերը (1 տեղ, 31.6 կգ քաշով, 7,602 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով,
ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ
պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա
որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբա-
գրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՆ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1096 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում տուբերկույոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և
դեղակայուն տուբերկույոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային
ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/17968-14 և հոկտեմ-
բերի 20-ի N 06/5-1/17731-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 17-ի N ԱՄ/22.1/10844-14 եզրակացություն-
ները, **որոշում է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլխավոր հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետու-
թյան առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետա-
կան կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռը
(ռենտգեն սարք-հավաքածու (DX-D 300 system complete for Armenia SQ141340)՝ 7 տեղ,
1,106.7 կգ ընդհանուր քաշով, 105,330.85 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝
ներառյալ փոխադրման ծախսերը «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկույոզի դեմ
պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկույոզի կառավարման
ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի
հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջա-
նակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ- 1097- Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան
մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N 07/80-2/18221-14 և
հոկտեմբերի 29-ի N 06/3-3/18584-14, Հայաստանի Հանրապետության առողջապա-
հության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N ԱՄ/22.2/11105-14
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից
ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մաս-
նաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղեր՝ TMC 207 /100մգ/ N 28-196
դեղահաբ՝ մեկ տեղ, 0.8 կգ ընդհանուր քաշով, 392 եվրոյին համարժեք դրամ արժեքով,
փոխադրման ծախսերը կազմել են 66,27 եվրո, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծվում է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց
սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկու-
յոզի և դեղորայքակայուն տուբերկույոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի
ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1098 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ


(«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 27-ի N 07/80-2/18391-14 և հոկտեմբերի
27-ի N 06/3-3/18276-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակեր-
պության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվա-
կանի փետրվարի 15-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ին
հակազդման ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին» N Մ-070-Ա որոշմամբ հաստատ-
ված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ :

«ՓՐԻՆԹԻՆՖՈ» ՀՁ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00819468) 2014 թվականի հոկտեմբերի
8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բուկլետների տպա-
գրում՝ 2,071,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Ր
14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1099 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ-224-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«Հովարդ Կարազյոզյան» բժշկական բարեգործական հասարակական
կազմակերպություն) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/19260-14 և նոյեմբերի 5-ի
N 06/3-3/19413-14 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Հովարդ Կարազյոզյան» բժշկական բարեգործական հասարա-
կական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված
գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի
14-ի «Հովարդ Կարազյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպու-
թյան կողմից՝ 2014 թվականի ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական
օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-224-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝
01520882) 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված N 230004 պայմանագրում նշված
գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը
ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների
մատուցում՝ 300,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ
(ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի նոյեմբերի 17-ին կնքված N 400105 պայմանագրում
նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի
31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայություն-
ների մատուցում՝ 250,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի («Գյումրի»
էլ.ցանց) հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի հունիսի 6-ին կնքված N 133008
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից
մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարար-
ման ծառայությունների մատուցում՝ 200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի
հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Տաթև» մասնաճյուղի («Գորիս»
էլ.ցանց) հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի փետրվարի 26-ին կնքված N 560-00062
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից

մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարար-
ման ծառայությունների մատուցում՝ 200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի
հարկի.

5) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի («Վանաձոր»
էլ.ցանց) հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2006 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված
N 4100003130100005370 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014
թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրա-
էներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 250,000 դրամի չափով՝
առանց ավելացված արժեքի հարկի.


6) «Հայրուսագազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվա-
կանի հուլիսի 7-ին կնքված N 01708132572 պայմանագրում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակա-
հատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով՝
առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Հայրուսագազարդ» ՓԲԸ-ի Շիրակի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվա-
կանի փետրվարի 20-ին կնքված N 02108133502 պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանա-
կահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի
չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


8) «Հայրուսագազարդ» ՓԲԸ-ի Սյունիքի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվա-
կանի նոյեմբերի 29-ին կնքված N 14208138921 պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանա-
կահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 400,000 դրամի
չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Հայրուսագազարդ» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի
օգոստոսի 1-ին կնքված N 03108134373 պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանա-
կահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 400,000 դրամի
չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1100 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ-224-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական
կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 28-ի N 07/80-2/18419-14 և
հոկտեմբերի 28-ի N 06/3-3/18459-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական
հասարակական կազմակերպություն կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվա-
կանի մարտի 14-ի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական
կազմակերպություն կողմից՝ 2014 թվականի ընթացքում իրականացվող «Երեխաների
անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-224-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գարանտերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00840437) 2014 թվականի հոկտեմբերի
6-ին կնքված՝ N 24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գնորդին
պատկանող Hyundai Galloper 747SL64 պետհամարանիշի ավտոմեքենայի համար ավտոպա-
հեստամասերի մատակարարում՝ 564,170.00 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1101 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայկական Կարիտաս»
բարեսիրական հասարակական կազմակերպություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 07/80-2/19372-14 ու նոյեմբերի 6-ի
N 06/3-3/19368-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմա-
կերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրա-
կանացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղե-
կատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2014 թվականի
հոկտեմբերի 24-ի N Մ-1047-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրակա-
նացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2014 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված
N 6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արեգակ» կենտրոնի
տարածքի բարեկարգման և կառույցի երեսպատման աշխատանքների իրականացում՝
22,984,595 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1102- Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-411-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 21-ի N 1/01.3/12279-14 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 27-ի N 07/80-2/18395-14 ու հոկտեմբերի 27-ի N 06/3-3/18272-14 եզրակացությունները, **որոշում է.**

1. Սահմանել, որ «Հարավային Կովկասի Անդրսահմանային Միացյալ Քարտուղարության, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.12.2013 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հարավային Կովկասում Անդրսահմանային միացյալ քարտուղարության և «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջև 04.12.2013 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի» ծրագրի մասին» N Մ-411-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեդի պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109451) 2014 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված N ՀՀ-ԲԾ-ՊԸԱԾՁԲ-14/03 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ուղեփակոցների կառուցման և տեղեկատվության ցուցատախտակների տեղադրման» և «Այցելուների համար նախատեսված արահետների ստեղծման և ցուցատախտակների տեղադրման» աշխատանքների իրականացում՝ 8,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ- 1103 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏ-
ՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում տուրերկույոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում
և դեղակայուն տուրերկույոզի կառավարման ընդլայնում»
դրամաշնորհային ծրագիր)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 22-ի N ԱԿ/15/10986-14 գրու-
թյունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի
հոկտեմբերի 27-ի N 07/80-2/18394-14 ու հոկտեմբերի 28-ի N 06/3-3/18526-14 եզրակացու-
թյունները, **որոշում է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուրերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլխավոր հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի
«Հայաստանի Հանրապետությունում տուրերկույոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժե-
ղացում և դեղակայուն տուրերկույոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային
ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա
որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջա-
պահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 02551144)
և «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06922308) 2014 թվականի հոկտեմբերի
16-ին կնքված՝ N ԳՀ ՊԸԱՇՁԲ-14/3 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով
նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների
կատարման պարտավորության իրականացում՝ 675,000 դրամի չափով՝ առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳՈՎ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ- 110Կ - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-503-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 07/80-2/19513-14 ու նոյեմբերի 10-ի
N 06/3-3/19644-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
2014 թվականի հոկտեմբերի 31-ի N ԱՄ/22.2/11459-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**


1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն»
ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն»
ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակ-
ցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-503-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էկոմիքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01255701) 2014 թվականի սեպտեմբերի 30-ին
կնքված N ՏԱԿ-14/22 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատես-
վում է տնտեսական ապրանքների գնում 342,083 դրամի չափով՝ առանց ավելացված արժե-
քի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱԾ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1105 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-598-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 07/80-2/18568-14 և հոկտեմբերի 30-ի N 06/3-3/18755-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Արյան անվտանգության ազգային ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացմանը նպաստող» ծրագրի մասին» N Մ-598-Ա որոշմամբ հաստատված ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏԻՍԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 90032661) 2014 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված՝ N ԱԿ-ԱՊՁԲ-14/01-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արյան դոնորությունը խրախուսող ապրանքների ձեռքբերում՝ 1,334,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

14 նոյեմբերի 2014 թվականի N Մ- 1106 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N Մ-029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2014 թվականի նոյեմբերի 4-ի N 07/80-2/19162-14 և նոյեմբերի 6-ի
N 06/3-3/19494-14 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 24-ի «Օրրան» բարեգործական
հասարակական կազմակերպության կողմից 2014 թվականի ընթացքում իրականացվող
ծրագրի մասին» N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ
փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 15-րդ ենթակետում «2,854,000»
թիվը փոխարինել «2,514,000» թվով.


2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 17-րդ ենթակետում «3,200,000»
թիվը փոխարինել «3,540,000» թվով:

2. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության
կողմից (ՀՎՀՀ՝ 02552842) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն
անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա» Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504966) 2014 թվականի
սեպտեմբերի 22-ին կնքված N 103645 պայմանագրում նշված գործարքը, որով նախատես-
վում է ընթրիքի կազմակերպում՝ 3,540,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 նոյեմբերի 2014 թվականի N Մ-1107-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

